և ընդ շրջակայսն. և լուր զախորժելին, երբ եմուտ ասեն ընդ դուռն քաղաքին որ կոչի porta del popolo, պահապանն հարցեալ իցէ զկայսերէն, եթէ ե՞րբ հասանիցի, և նա պատասխանեալ է, թէ ոչ է այնչափ հեռի. և ապա անտի առաջնորդութեամբ կնոջ միոյ գնացեալ է ի թաէնիթայ տի մոնթէն, ուր կայր եղբայր նորա օթևանեալ. և ի կամելն մտանել ի ներքս, հազիւ հազ, յետ այնչափ սպասեցուցանելոյ դռնապանին զնա թոյլ տուեալ է, և այն այսու ոճիւ. զի ի հարցանելն թէ ե՞րբ գայցէ իմփէռաթօռն, ցուցեալ է նա զերկուս ծրարս թղթոց, թէ յայսոսիկ յայտնի լինին. և պատճառելով թէ տալոց է զայնոսիկ ի ձեռս մինիսթրոյին և կոանտուզային, մտեալ է ի ներքս, և անցեալ ընդ ամենայն սենեակս առաջնորդութեամբ սպասաւորի միոյ հասեալ է ուր ննջէր եղբայրն նորա, և զարթուցեալ զնա, և զգամարերսն, իսկոյն հրապարակեցաւ ընդ քաղաքն, թէպէտ կարծեօք գիտէաք թէ գալոց է, ուստի և անհամար անձինք սպասէին այսր անդր և առ դրան քաղաքին, բայց որովհետև փոքրիկ գալէսով միով եկն, և էանց ընդ մէջ ժողովրդեանն, ոչ ոք կարաց ճանաչել զնա: Ուստի յետ մտանելոյ նորա ի պալատն, իսկ և իսկ հրապարակեցաւ և գղրդեցաւ քաղաքն ամենայն: Եւ իսկոյն փոինչիփէյք հանդերձ մաճօռտօմոյով առաքեցելով ի Գօնզլաւէն գնացին ի յարգել զնա. սակայն նա ոչ ընկալաւ զնոսա, տալով զայսպիսի ինչ պատասխանի, թէ կայսր ի վիեննայ նստի, և որ եկեալն է, նա է իշխանն պռասպուռ. և այսպէս յետս դարձոյց զնոսա, յոյս տալով տեսանել զամենեսին ըստ ժամանակին եթէ տէր կամեսցի: Սոյնպէս յետս առաքեաց և զգունդս զինուորացն, և զօրապետացն որք գնացին կալ ի սպասու նորա. և այսպէս ոչ երբէք կամեցաւ և կամի, զի հրատարակեսցի և ճանաչեսցի իբր կայսր: Այլ ախորժի յոյժ զի շրջեսցի ընդ բոլոր քաղաքն ազատապէս: Բայց քանզի ժողովուրդն Հռոմայեցւոց անհամբեր է յայսպիսիս, ոչ այլ ինչ լսի յամենայն անկիւնս քաղաքին ուր երևի, բայց եթէ Վիվա իմփէռաթօռէ: Մանաւանդ ի նոյն աւուրն յետ միոյ ժամու բիւրք բիւրոց կային առաջի պալատի նորա և գոչէին, վիվա իմփէռաթօռէ, և նա եբաց զպատուհանն, և երկիցս շնորհակալ եղև նշանացի, և ի բարձրացուցանելն նոցա զբարբառս իւրեանց յերրորդումն, ձեռօք նշան տայր զի հանդարտեսցին: Ո՛հ է հնար լիով պատմել զզարմանալիս որք եղեն յայսոսիկ աւուրս ի Հռոմ, զամենայն ինչ մոռացան, ոչ զՊապ յիշէին և ոչ զԳօնզլաւն, զսմանէ խօսին, և զսմանէ պատմեն, և զսա հաճեցուցանել խորհին: Բաց յուրախութեանցն զորս յամենայն երեկոյի ի զանազան պալատս փոինչիփէյից առնեն և արարին (թէպէտ սկսեալ էին տասն աւուրբք յառաջ վասն կոանտուզային որ կայր ի Հռոմ իշխանք քաղաքիս առնել մեծամեծ չէնայս) սակայն ի գալ կայսերն, աճեցուցին յոյժ յոյժ, ոչ միայն զչէնայս և զգօնվէռսացիօնս, ամենայն պայծառութեամբ, և չքեղաչուք մեծութեամբ, այլ և զընդունելութիւնս արքունիս: Ընդ բոլոր օրն շրջի ի տեսանել զհնութիւնս որ ի քաղաքիս, և ցերեկոյին հրաւիրի եղբարբն ի պալատ փոինչիփէյից, ուր զխաղս և զերաժշտութիւնս երգոց և զզարմանալիս վայելէն. սակայն յայսմ ամենայնի զիւրեանց ջերմեռանդութիւնն ոչ թողուն ի շինութիւն հռոմայեցւոց. ի չորս ժամու գիշերոյն դառնան նոքա ի տունս իւրեանց, ուր հռոմայեցիք մինչև ցութն և ցինն ժամ գիշերոյն յամեն: Երկիցս և երիցս խոստովանեցան և հաղորդեցան իբրև զայլ մարդիկս կալով ի մէջ ժողովրդեան, և ոտօք գնացին առ սուրբն պետրոս: Անցոյց զանցոյց զամենեքումբք զօվէռսացիօնն զոր արար տօռլայն, ուր ներկայացուցին և զսանն իւր առ կայսրն սանահայր, լի ակամբք պատուականօք...:

Գարտինալքն Գօնզլավին արարին նմա շնորհս ինչ որ ոչ երբէք յիշի արարեալ ումեք. զի յաւուրն երկրորդի գալստեան նորա յետ ճաշու ժամուն գիտաց եթէ մտանելոց էր ի Գօնլաւն գարտինալ սփինօլան, եկն իսկոյն առ ի տեսանել զչէրէմօնիան, և եկաց առ դրան զօնզլավին, և իբրև տեսին զնա գարտինալքն, կալան զձեռանէ նորա և եղբօրն, և մուծին ի ներքս. և այս եղև ի խնդրոյ ալպանին և միլանէզ գարտինալաց և եկաց անդ ընդ գարտինալաց իբրու ժամ մի, և շրջեցաւ ընդ բոլոր Գօնզլաւն, բազում ուրախութեամբ իւրով, և գարտինալացն. ի մէջ անբաւ զարմանալի զրուցաց ասացելոց անդ, է և այս, զի երբ ալպանին ասացեալ է, տեսեալ գոլ զբազում Գօնզլավս, և Գօնզլաւն վասն լամպէրթինին տևեալ գոլ վեց ամիս, նա պատասխանեալ է ներկայութեամբ ամե-